Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

06 օգոստոսի 2026թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ա. Նարեկացյան, Լ. Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. ***Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ***

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	սեղանի համակարգիչներ	5 100 000
2	համակարգչային մոնիտոր	700 000
3	բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	7 000 000
4	բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	2 715 000
5	անխափան սնուցման աղբյուրներ	720 000

2. ***Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ***

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 04.08.2026թ.-ին ժամը 11:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 05.08.2026թ.-ին ժամը 11:30-ին:

3. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.***

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00130965, ք.Երևան, Ազատության 27, mv@toner.am, հեռ. 098 68 87 88
2	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01254973, ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30 , khv_84@mail.ru , հեռ, 091 40 40 73
3	«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 08419867, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Զոլաքար, 23 փող., 2-րդ նրբանցք, տուն 11, atenders@list.ru, հեռ. 094 93 01 27

4. ***Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-26/3 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. ***Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

1.1 26.07.2026թ.-ին հնարավոր մասնակցի կողմից գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ստացվել է հարցում ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-26/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված վարչական սարքավորումների ձեռքբերման 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագրի վերաբերյալ: 28.07.2026թ.-ին գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հնարավոր մասնակցին ուղարկվել է հարցման պատասխանը:

6. ***Տեղեկություն հակառարծ աճուրդի արդյունքների վերաբերյալ***

Չափա բաժնի համար	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	սեղանի համակարգիչներ	Էյչ Գրուպ ՍՊԸ	5100000	5525000	20 %	6630000	5525000	20 %	6630000.00	Մերժված
		«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ		555000000	20 %	666000000	555000000	20 %	666000000.00	Մերժված
2	համակարգչային մոնիտոր	Էյչ Գրուպ ՍՊԸ	700000	758333.34	20 %	910000	615000	20 %	738000.00	Մերժված
		«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ		555000000	20 %	666000000	555000000	20 %	666000000.00	Մերժված
3	Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	Էյչ Գրուպ ՍՊԸ	7000000	7583333.34	20 %	9100000	7583333.34	20 %	9100000.00	Մերժված
		«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ		555000000	20 %	666000000	555000000	20 %	666000000.00	Մերժված
4	բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	Մ Վ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ	2715000	2262500	20 %	2715000	2262500	20 %	2715000.00	
		Էյչ Գրուպ ՍՊԸ		2941250	20 %	3529500	2941250	20 %	3529500.00	Մերժված
		«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ		555000000	20 %	666000000	555000000	20 %	666000000.00	Մերժված
5	Անխափան սնուցման աղբյուրներ	Էյչ Գրուպ ՍՊԸ	720000	780000	20 %	936000	780000	20 %	936000.00	Մերժված
		«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ		555000000	20 %	666000000	555000000	20 %	666000000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 05.08.2026թ.-ին և Համակարգի կողմից

- 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն,**

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ.

7.1. Համակարգի կողմից 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ներկայացված Հավելված 1.3-ում (Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) գրված հողումը սխալ է կամ ոչ լիարժեք:
- 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի մեջ «Տեխնիկական բնութագիր» սյունակում ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնով գրված տեխնիկական բնութագրին: Ներկայացված է 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-26/3** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 06.08.2026թ.-ին Համակարգի միջոցով ծանուցել **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 13.08.2026թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 13.08.2026թ. ժամը 15:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 13.08.2026թ. ժամը 15:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

10.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

10.6 Հաստատել 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

_____ Վահագն Մկրտչյան

_____ Աննա Նարեկացյան

_____ Լիանա Նալբանդյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան